ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեսահսկողության համակարգի ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 29.04.2016թ. N 1/12-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 02.05.2016թ. ժամը 11-30-ին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Քառյանը, Ա.Ջուլհակյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

<u>Օրակարգ</u>
<u>Հայտերի գնահատման մասին</u>

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Հենմարքոմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը որոշեց՝
-«Հենմարքոմ» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող գնահատված հայտ ներկայացրած և նիստին ներկա «Հենմարքոմ» ՍՊԸ-ի տնօրեն Է.Ասիկյանին հրավիրեց մասնակցելու ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 74-րդ կետի 1-ին ենթակետի զ/ կետի պայմաններով բանակցությունների:
-Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին «Հենմարքոմ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկը թողեց անփոփոխ:
-գնահատող հանձնաժողովը որոշեց՝
1.Ներկայացված հայտի հիման վրա և հաշվի առնելով, որ հիշյալ գնման ընթացակարգին «Հենմարքոմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը՝ «Հենմարքոմ» ՍՊԸ -ին հայտարարել առաջին տեղը զբաղեցրած մասնակից:
2. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հրավերի 2.1 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
Գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյան

Անդամներ՝ Գ.Քառյան

Ա.Ջուլհակյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար տեսահսկողության համակարգի ձեռքբերման գահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 29.04.2016թ. N 1/12-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 29.04.2016թ. ժամը 14-30-ին, ՀՀ ԿԱ ՊԵԿ վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Քառյանը, Ա.Ջուլհակյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի բացման մասին

-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Հ.Մազմանյանը տեղեկացրեց, որ ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու համար /29.04.2016թ. թիվ-1/18-2/13677-16 գրությամբ/ էլեկտրոնային ծանուցմամբ հրավեր էր ուղարկվել՝ «Հենմարքոմ» ՍՊԸ-ին:
-ՀՀ-ԿԱ-ՊԵԿ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-2 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.
«Հենմարքոմ» ՍՊԸ-ն (ք.Երևան, Ավան Դուրյան 57շ. բն.23)
-գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «Հենմարքոմ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված՝
ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով.
բ/ բացված ծրարում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան.

Մասնակցի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

«Հենմարքոմ» ՍՊԸ

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը ՀՀ դրամ
1	Տեսահսկողության համակարգ	-	4108800

*«Հենմարքոմ» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:
-«Հենմարքոմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2016 թվականի մայիսի 2-ին ժամը-11.30-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:
՝

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ.Մազմանյան

Անդամներ՝ Գ.Քառյան

Ա.Ջուլհակյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան